Տեղեկանք

Գործող օրենքում առաջարկվող լրացման մասին

«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Հոդված 5.1. Ջրօգտագործողի իրավունքները և պարտականությունները

Ջրօգտագործողն իրավունք ունի՝

ա) օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով ստանալու ոռոգման ջուր.

բ) օրենքով սահմանված կարգով հիմնադրելու Ընկերություն.

գ) անդամակցելու Ընկերությանը.

դ) ծանոթանալու Ընկերության կանոնադրությանը, ներքին կանոնակարգին, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգին, վերստուգող հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կանոնակարգին.

ե) մասնակցելու Ընկերության վեճեր լուծող հանձնաժողովի նիստերին:

Ջրօգտագործողը պարտավոր է՝

ա) ոռոգման ջուր ստանալու համար Ընկերության հետ կնքել ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր.

բ) յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել <u>անկանխիկ ձևով</u> մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը: